ի թագաւորանիստ քաղաքն Վերսալիա. տեսայ(1) զԹու-
թունճի Յովհաննէս վարդապետն, Սիսիանցի Զաքարիա
վարդապետն, Հալապցի Ղազարոսի(2) որդի Յովսէփն(3),
Էրզրումցի Յովհաննէսի որդի Գրիգորն, Ղազանճի(4)
Մուրատն, Ոսկան վարդապետի քվեր որդի(5) Սողոմոնն:
Նաեւ տեսաք Ֆրանցայու թագաւորն, զկինն(6), զորդին
եւ զեղբայրն, զեղբօր հարսն եւ զվէզիրն: Տեսաք զսէ-
րայներն եւ զայլ ամենայն սալթանաթն սէրային, զե-
ղեցիկ շինուածք, ոսկեղէն, արծաթեղէն եւ ճէվահիրե-
ղէն. ութը կամար մէկ մէկի վրայ, արծաթեղէն եւ
թուրլու թուրլու(7) ամարակով(8): Եւ մին երկայն սը-
րահ, որ է խաղալոյ տեղ, որ կէսն շինած էր եւ զկէսն
նոր կու շինէին, որ վեց միլիոն խարճ կու գնայր, որ
իւր ղափուն էր(9), եւ ամենայն երկրի վրայ մէկն ա-
նելու տեղ կայր. թահմին արաք որ ԺԶ. միլիոնի զարդ
կայ: Եւ այլն...»:

Արդ, ԺԷ. դարու երկրորդ կէսը նշանաւոր ժամանակամիջոց մըն է, վասնզի արեւելեան բազմա-թիւ ժողովուրդներ, շլացած՝ Լուի ԺԴ.ի պետութեան փայլէն և Արեւելքի մէջ քրիստոնէից պաշտպան հան-դիսանալու ձեւերէն, մեծ յոյսեր դրած էին անոր վը-րայ և անկէ կ'ակնկալէին իրենց փրկութիւնը:

---

(1) Լեւոնեան ունի «*և անդ. գտի*»
(2) » » «*Ղազարի*»
(3) » » «*Ջուզէպն*»
(4) » » «*Խազանկէլէրցի*»
(5) Զարբհանէլեան ունի «քեռորդի»
(6) Լեւոնեան ունի «զթագուհին»
(7) Լեւոնեան՝ «ազգի ազգի»
(8) Լեւոնեան՝ «շինուածքով»
(9) » «որ իւր ղափուն էր»ի տեղ ունի «եւ ըզ-գուռն զոր շինէին զարմանալի եւ հիանալի էր տեսողացն» եւ այլն»